



Co-funded by the  
Tempus Programme  
of the European Union



**ՀՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ  
ԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿԻ 2016-2020 ԹԹ.  
ԻՐԱԿԱՆԱՃՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՀՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ  
ԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿԻ ԳՈՐԾԱԴՐՄԱՆ ԴԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՂԱԿԱՐԳ**



**IMPLEMENTATION STRATEGY  
OF THE NATIONAL QUALIFICATIONS FRAMEWORK FOR  
HIGHER EDUCATION OF ARMENIA FOR 2016-2020**

**CONCEPT PAPER  
ON FUNCTIONALITIES OF THE BODY IN CHARGE OF  
IMPLEMENTATION OF NATIONAL QUALIFICATIONS  
FRAMEWORK FOR HIGHER EDUCATION OF ARMENIA**

ՀՏԴ 378  
ԳՄԴ 74.58  
Հ 247

ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակի  
Հ 247 2016-2020 թթ. իրականացման ռազմավարություն: ՀՀ բարձրագույն  
կրթության որակավորումների ազգային շրջանակի գործադրման  
պատասխանատու մարմնի հայեցակարգ.- Եր.: 2016.- 108 էջ:


ՀՏԴ 378  
ԳՄԴ 74.58



Co-funded by the  
Tempus Programme  
of the European Union




**TEMPUS «ԱՐՄԵՆՔԱ» ՆԱԽԱԳԻԾ  
ԹԻՎ 543817-TEMPUS-1-2013-1-SE-TEMPUS-SMHES  
«ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՈՒՆՐԱՅՅԻՆ  
ՇՐՋԱՆԱԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՃՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ»**




**ՀՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ  
ԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿԻ 2016-2020 ԹԹ.  
ԻՐԱԿԱՆԱՃՄԱՆ ՈՎՁՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ԵՐԵՎԱՆ 2016**



***Այս նախագիծը ֆինանսավորվել է Եվրոպական  
Հանձնաժողովի օժանդակությամբ:***

***Սույն հրապարակումը արտացոլում է միայն  
հեղինակների տեսակետները, և Հանձնաժողովը  
պատասխանատվություն չի կրում դրանում տեղ  
գտած տեղեկատվության կիրառման համար:***



***This project has been funded with support from the  
European Commission.***

***This publication reflects the views only of the  
author, and the Commission cannot be held  
responsible for any use which may be made of the  
information contained therein.***



## **ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

ՆԱԽԱԲԱՆ .....	6
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ .....	7
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ .....	8
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ .....	10
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՑՈՒՑԻՉՆԵՐ .....	11
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ .....	19
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ .....	28
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ .....	29
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՑԻՆ ՊԼԱՆ .....	31



## ՆԱԽԱԲԱՆ

Որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ) իրականացումը եղել և մնում է ՀՀ բարձրագույն կրթության համակարգի վերջին տասնամյակի բարեփոխումների հիմնական թիրախներից և մարտահրավերներից մեկը: Առաջին ՈԱՇ-ը ՀՀ Կառավարությունը ներմուծել է դեռևս 2011թ-ին՝ մի քանի տարիների նախապատրաստական աշխատանքներից հետո: Չնայած երեք տարի էր անցել ՀՀ առաջին ՈԱՇ-ի հաստատումից հետո, սակայն այն դեռևս էական ազդեցություն չէր ունեցել բարձրագույն կրթության համակարգի վրա: 2012թ-ին ՀՀ Կրթության և գիտության նախարարությունը (ԿԳՆ) նախաձեռնեց ՈԱՇ-ի ինքնահավաստագրման գործընթաց: Միջազգային փորձագիտական խմբի գնահատման արդյունքում բացահայտվեցին մի շարք թերություններ և բացթողումներ, որոնք խոչընդոտում էին ՈԱՇ-ի ազդեցությունը Հայաստանի կրթական ոլորտի վրա: Նշված թերություններից մեկը ՀՀ ՈԱՇ-ի իրականացման երկարաժամկետ ռազմավարության բացակայությունն էր՝ մանրամասն աշխատանքային պլանով և ժամանակացույցով:

2014թ-ին Տեմպուս «ԱՐՄԵՆ-ՔԱ» 543817-TEMPUS-1-2013-1-SE-TEMPUS-SMHES «Որակավորումների ազգային և ոլորտային շրջանակների իրականացումը Հայաստանում» նախագծի շրջանակներում ՀՀ բարձրագույն կրթության նոր ՈԱՇ-ի մշակումից հետո՝ 2015-ին մշակվեց նաև «ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակի իրականացման 2016-2020 թթ. ռազմավարությունը»:

Ռազմավարությունը և դրա իրականացման աշխատանքային պլանը 2015-ի հոկտեմբերին ներկայացվել է ՀՀ ԿԳՆ՝ քննարկման և հիմնական շահակիցների արձագանքը ստանալու նպատակով: Քանի որ այդ ժամանակ ՀՀ նոր ՈԱՇ-ը դեռևս հաստատված չէր ՀՀ Կառավարության կողմից, ուստի ԿԳՆ-ն հետաձգեց ՈԱՇ-ի իրականացման սույն ռազմավարության գործարկումը:

2016թ-ի հուլիսին ՀՀ Կառավարության կողմից ՈԱՇ-ի հաստատումից հետո դրա իրականացման ռազմավարությունն արդեն կարող էր կյանքի կոչվել:

«ԱՐՄԵՆ-ՔԱ» ծրագրի շրջանակներում ՈԱՇ-ի իրականացման ռազմավարության հրատարակման պահին վերջինիս մի շարք խնդիրներ, գործողություններ և միջոցառումներ արդեն իրականացվել կամ գտնվում են իրականացման փուլում: Աշխատանքային պլանում դրանք ներկայացված են համապատասխանաբար **կապույտ** և **կանաչ** գույներով:



## **ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ**

ԱՓՇԱՏԿ	Ակադեմիական փոխանակման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոն
ԲԿ	Բարձրագույն կրթություն
ԲԿՈԱՇ	ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակ
ԲԿՈԵՇ	Բարձրագույն կրթության որակավորումների եվրոպական շրջանակ (Դուբլինյան նկարագրիչներ)
ԲԿՌ-ՀԱԿ	Բարձրագույն կրթության ռազմավարական հետազոտությունների ազգային կենտրոն
ԲՀՄԿ օրենք	Բարձրագույն և հետրուհական մասնագիտական կրթության մասին ՀՀ օրենք
ԲՈՒՀ	Բարձրագույն ուսումնական հաստատություն
ԳՊՀ	Գավառի պետական համալսարան
ԳՊՄԻ	Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտ
ԵԲԿՏ	Եվրոպական բարձրագույն կրթության տարածք
ԵԶՈՒ	Որակի ապահովման եվրոպական չափորոշիչներ և ուղենիշներ
ԵՊԼՀ	Երևանի պետական լեզվահասարակագիտական համալսարան
ԵՊՀ	Երևանի պետական համալսարան
ԿԳՆ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն
ՀԱԱՀ	Հայաստանի ազգային ազրարային համալսարան
ՀԳՀՄ	Հայաստանի գործատուների հանրապետական միություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՊՄՀ	Հայաստանի պետական մանկավարժական համալսարան
ՈԱ	Որակի ապահովում
ՈԱԱԿ	ՀՀ «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամ
ՈԵՇ	Հարատև/ցկյանս ուսումնառության որակավորումների եվրոպական շրջանակ
ՈՈՇ	Որակավորումների ոլորտային շրջանակ



## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն ռազմավարությունը սահմանում է ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակի (ԲԿՈԱՇ) երկարաժամկետ նպատակները և խնդիրները, որոնց իրականացումը միտված է ՀՀ բարձրագույն կրթության համակարգի հետագա զարգացմանը:

Ռազմավարությունը ներառում է համապատասխան միջոցառումներ և մեխանիզմներ՝ ՀՀ ԲԿՈԱՇ-ը շահակիցների լայն շրջանում տարածելու և գործադրելու, բարձրագույն կրթության տարբեր որակավորումների միջև կապը հստակեցնելու և դրանց որակը հավաստելու, ինչպես նաև ԲԿՈԱՇ-ում ներառված որակավորումների ճանաչումը արտերկրում խթանելու համար: Ռազմավարության հաջող իրականացման համար անհրաժեշտ է բոլոր շահագրգիռ կողմերի, մասնավորապես՝ Կրթության և գիտության նախարարության, բուհերի և այլ կրթական հաստատությունների, Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի (ՈԱԱԿ), Ակադեմիական փոխանակման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնի (ԱՓՇԱՏԿ), ինչպես նաև սովորողների, գործատուների և սոցիալական այլ գործընկերների ու առնչվող պետական կառույցների ակտիվ ներգրավումն այդ գործընթացում:

Սույն ռազմավարության արդյունավետ իրականացման հիմնական գրավականներն են՝ բարձրագույն կրթության որակավորումները և կրթական ծրագրերը մշակելիս ուսումնառության վերջնարդյունքների կիրառումը, որակավորումների միջև անցման թափանցիկ և բազմազանեցված ուղիների ապահովումը, ինչպես նաև ԲԿՈԱՇ-ի որակավորումների որակի ապահովումը և միջազգային ճանաչմանը նպաստելը:

Մինևույն ժամանակ, ԲԿՈԱՇ-ի ռազմավարության իրականացման աշխատանքները համակարգելու և սահմանված նպատակների ու խնդիրների կատարման առաջընթացն ու ձեռքբերումը վերահսկելու/մշտա-





դիտարկելու նպատակով անհրաժեշտ է առանձնացնել կամ ստեղծել ԲԿՈԱՇ-ի իրականացման համար պատասխանատու մարմին կամ կառույց:

ՀՀ ԲԿՈԱՇ-ի իրականացման սույն ռազմավարության հիմքում դրված են երեք հիմնական նպատակներ, որոնցից յուրաքանչյուրին հասնելու համար սահմանվել են համապատասխան ռազմավարական խնդիրներ և մշակվել դրանց իրագործման կոնկրետ գործողություններ/միջոցառումներ: Յուրաքանչյուր ռազմավարական խնդրի կատարման աստիճանը կամ առաջընթացը չափելու համար սահմանվել են կատարողականի կամ առաջընթացի գնահատման ցուցիչներ: Ռազմավարական ծրագիրը պարունակում է նաև համապատասխան ժամանակացույց և աշխատանքային պլան, որտեղ ներկայացված են առանձին գործողությունների/միջոցառումների իրականացման ժամկետները, պատասխանատուները, ֆինանսավորման աղբյուրը և ակնկալվող արդյունքը:



## **ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ**

Հիմնվելով ՀՀ ԲԿՈԱԸ-ի իրականացման առկա իրավիճակի վերլուծության<sup>1</sup> և բարձրագույն կրթության ներկայիս կարիքների բացահայտման արդյունքների<sup>2</sup> վրա՝ սահմանվում են ԲԿՈԱԸ-ի հաջող իրականացման համար անհրաժեշտ հետևյալ երեք հիմնական ռազմավարական նպատակները.

- 1. Իրազեկել հանրությանը ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակի մասին և խթանել դրա օգտագործումը բոլոր հիմնական շահակիցների կողմից:**
- 2. Իրականացնել ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակում ներառված որակավորումների որակի հավաստում՝ ազգային և եվրոպական չափորոշիչներին համապատասխան:**
- 3. Խթանել ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակում ներառված որակավորումների ճանաչումը արտերկրում, իսկ այնտեղ շնորհվածներինը՝ Հայաստանում:**

Վերոնշյալ նպատակների իրականացումը ենթադրում է պարզ, հասկանալի, թափանցիկ, հասարակության և տնտեսության կարիքներին միտված և դրանց հետ փոխկապակցված որակավորումների համակարգի ստեղծում և կիրառում:

<sup>1</sup> - Սթեֆեն Ադամ, Եվա Գոնսզի (անդամակցել են որպես միջազգային խորհրդատուներ ՀՀ ՈԱԸ-ի ինքնահավաստագրման աշխատանքային խմբին), ՀՀ որակավորումների ազգային շրջանակի ներկայիս իրավիճակի վերլուծությունը՝ այդ թվում դրա հետագա զարգացման առաջարկությունները: Զեկույց, 31 մայիսի 2012թ., 18 էջ:

- Սթեֆեն Ադամ, Եվա Գոնսզի, ՀՀ որակավորումների ազգային նոր շրջանակի նախնական գնահատականը: Զեկույց, 11 դեկտեմբերի 2012թ., 7 էջ:

- Արմեն Աշոտյան (ՀՀ կրթության և գիտության նախարար), զեկույց կրթության նախարարների 2-րդ տարածաշրջանային կոնֆերանսում՝ նվիրված անդամ երկրներում ԵԲԿՏ սկզբունքների իրականացմանը: Ստրասբուրգ, 22-23 նոյեմբերի, 2012թ.: ( <http://www.coe.int/higher-education> ):

<sup>2</sup> Ա. Բուդաղյան, Յու. Սարգսյան, Ն. Մանասյան, Մ. Սանթրոբջյան, Հայաստանի բարձրագույն կրթության բարեփոխումների առկա վիճակը և հեռանկարները Բոլոնիայի գործընթացի համատեքստում. Վերլուծական զեկույց՝ պատրաստված ՀՀ կրթության և գիտության նախարարության պատվերով: Բարձրագույն կրթության ռազմավարական հետազոտությունների ազգային կենտրոն, Փրինստինֆո, Երևան, 2012, 222 էջ:



## **ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՑՈՒՑԻՉՆԵՐ**

Ստորև ներկայացված են այն խնդիրները, որոնց իրականացումը երկարաժամկետ պլանում կհանգեցնի սահմանված երեք ռազմավարական նպատակների կատարմանը, ինչպես նաև առաջընթացի/կատարողականի գնահատման ցուցիչներ, որոնք հնարավորություն կտան ծրագրի ավարտին չափելու այդ խնդիրների կատարման ուղղությամբ ձեռքբերված ընթացիկ առաջընթացը և վերջնարդյունքները:



### **ՆՊԱՏԱԿ 1. ԻՐԱԶԵԿԵԼ ՀԱՆՐՈՒԹՅԱՆԸ ՀՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ ԵՎ ԽԹԱՆԵԼ ԴՐԱ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԲՈԼՈՐ ՀԻՄՆԱԿԱՆ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ:**

ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակը (ԲԿՈԱՇ) առաջին հերթին պետք է հասկանալի և ընկալելի լինի սովորողների, բուհերի (և ուսումնական այլ հաստատությունների), գործատուների, առնչվող պետական և հասարակական կառույցների և այլ շահակիցների համար, մինչև ժամանակ, հարմար լինի օգտագործման տեսանկյունից: Ուստի, որակավորումները պետք է մշակվեն և նկարագրվեն/սահմանվեն այնպես, որպեսզի բավարարեն այդ պահանջները: ԲԿՈԱՇ-ի իրականացման գործընթացում պետք է կարևորվեն կրթական վերջնարդյունքները, որոնք հիմք կհանդիսանան որակավորումների և այլ կրթական արդյունքների/ձեռքբերումների նկարագրման, համեմատման, գնահատման, շնորհման և ճանաչման համար: ՀՀ ԲԿՈԱՇ-ի դերն ավելի կմեծանա, եթե այն լայնորեն օգտագործվի աշխատանքային (ծառայողական) պաշտոններում մասնագետների ընտրության և նշանակման, իսկ բարձրագույն ուսումնական հաստատություններում՝



ուսանողների/սովորողների ընդունելության գործընթացներում: Վերջինս ենթադրում է հանրության շրջանում ԲԿՈԱԾ-ի և դրա որակավորումների վերաբերյալ իրազեկվածության բարձրացում ու համապատասխան գիտելիքի շարունակական զարգացում: Այս տեսանկյունից կարևորվում է նաև ՀՀ ԲԿՈԱԾ-ի որակավորումների և համապատասխան կրթական ծրագրերի ազգային տեղեկատվական ռեգիստրի ստեղծումը:

### **Իրականացվող խնդիրները մինչև 2020 թվականը**

- 1.1. Ստեղծել ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակի գործադրման և հետագա զարգացման համար պատասխանատու կառույց/մարմին:
- 1.2. Բարձրացնել բոլոր շահակիցների և հանրության իրազեկվածությունը ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակի վերաբերյալ:
- 1.3. Մշակել ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակի գործադրման համար անհրաժեշտ իրավական և մեթոդաբանական հենքն ու պրակտիկ գործիքամիջոցները:
- 1.4. Չարգացնել ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակի հիմնական շահակիցների ներուժը՝ շրջանակի արդյունավետ կիրառման և հետագա զարգացման նպատակով:
- 1.5. Ստեղծել ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակին համահունչ որակավորումների ոլորտային շրջանակներ (ՈՈՇ)՝ բարձրագույն կրթության տարբեր մասնագիտական ոլորտների համար:
- 1.6. Մշակել և գործադրել ինստիտուցիոնալ (բուհական) մակարդակում ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակի իրականացման համալիր միջոցառումների ծրագիր:
- 1.7. Մշակել օրենսդրական փոփոխությունների նախագիծ՝ պետական և հանրային կառույցների աշխատողների ծառայողական անձնագրե-



րում ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակին համապատասխան հղումներ ներառելու նպատակով:

- 1.8. Մշակել և իրականացնել նախընթաց ուսումնառության ճանաչումը խթանող գործողությունների ազգային ծրագիր՝ հիմնված ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային և որակավորումների ոլորտային շրջանակների օգտագործման վրա:



## **Առաջընթացի/կատարողականի գնահատման ցուցիչներ**

- ◆ *ԲԿՈԱԸ-ի գործադրման համար պատասխանատու կառույցը/մարմինը սրբեղծվել է ՀՀ Կրթության և գիտության նախարարության կողմից և գործում է:*
- ◆ *Հիմնական շահակիցները (հայրկապես բուհերը և գործադրումները) բավականաչափ տեղեկացված են ԲԿՈԱԸ-ի մասին, ինչի մասին փաստում են անցկացված հարցումները:*
- ◆ *ՀՀ բարձրագույն կրթության օրենսդրությունում առկա են համապատասխան հղումներ ԲԿՈԱԸ-ին:*
- ◆ *Առկա են մեթոդական ձեռնարկներ և պրակտիկ ուղեցույցներ, որոնք օժանդակում են ԲԿՈԱԸ-ի կիրառմանը բուհերում և այլ շահագրգիռ կառույցներում:*
- ◆ *Բուհերի, բարձրագույն կրթության ոլորտը կարգավորող մարմինների, հավատարմագրման ու ճանաչման կառույցների, գործադրումների և սոցիալական գործընկերների ներկայացուցիչները վերապատրաստվել են ԲԿՈԱԸ-ի օգտագործման համար:*
- ◆ *ՀՀ բարձրագույն կրթության բոլոր մասնագիտական ոլորտներում առկա են համապատասխան ՈՈՇ-ներ:*
- ◆ *Բուհերն ու այլ ուսումնական հաստատություններն օգտագործում են ԲԿՈԱԸ-ը և ՈՈՇ-ները կրթական ծրագրեր մշակելիս և գնահատելիս:*



- ◆ Կրթական ծրագրերը համահունչ են ԲԿՈԱԸ-ի և ՈՈԸ-ների նկարագրիչների պահանջներին և հիմնված են կրթական վերջնարդյունքների վրա:
- ◆ Դիպլոմի հավելվածը ներառում է համապատասխան հղումներ ՀՀ ԲԿՈԱԸ-ին:
- ◆ Գործադրողները և մասնագիտական գործունեությունը կարգավորող կառույցները (մասնագիտական ընկերակցություններ և այլն) օգտագործում են ԲԿՈԱԸ-ը աշխատողների ընտրության և համալրման գործընթացներում:
- ◆ Առկա են նախընթաց ուսումնառության ճանաչման ընթացակարգեր և չափանիշներ: ԲԿՈԱԸ-ի և ՈՈԸ-ների նկարագրիչներն օգտագործվում են սովորողների կրթական ձեռքբերումները չափելիս և գնահատելիս:

Ռազմավարական ծրագրի իրականացման ընթացքում հիմնական շահակիցների հետ համատեղ կմշակվեն մոնիթորինգի (մշտադիտարկման) մեխանիզմներ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև կատարողականի գնահատման լրացուցիչ ցուցիչներ:



## **ՆՊԱՏԱԿ 2. ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ՀՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՈՐԱԿԻ ՀԱՎԱՏՏՈՒՄ՝ ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԶՄՈՐՈՇԻՉՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ:**

ՀՀ-ում շնորհիված որակավորումների նկատմամբ հանրության (այդ թվում՝ միջազգային) վստահությունն ապահովելու տեսանկյունից կարևոր է նաև որակավորումների համար բարձր չափանիշների սահմանումը, դրանց պահպանումն ու շարունակական բարելավումը, ինչպես նաև որակի հավաստման արդյունավետ մեխանիզմների գործադրումը: ՀՀ ԲԿՈԱՇ-ում ներառված որակավորումների որակի հավաստումը՝ որակի ազգային և եվրոպական չափորոշիչների պահանջներին համապատասխան, մեծ նշանակություն կունենա ԲԿՈԱՇ-ի արժանահավատության ապահովման, ՀՀ մասնագիտական աշխատաշուկայում և բարձրագույն կրթության համակարգում փոխվստահության մթնոլորտի ձևավորման ու հետագա ամրապնդման համար:



### **Իրականացվող խնդիրները մինչև 2020 թվականը**

- 2.1. Ստեղծել ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակում ներառվող որակավորումների նկարագրման (սահմանման) չափորոշիչներ, ձևաչափեր և համապատասխան ընթացակարգ:
- 2.2. Մշակել և գործադրել անհրաժեշտ գործիքակազմ ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային և որակավորումների ոլորտային շրջանակների նկարագրիչներին բարձրագույն կրթության ծրագրերի համապատասխանությունը ստուգելու համար:
- 2.3. Ներմուծել և իրականացնել ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակում ներառված որակավորումների կրթական ծրագրերի որակի արտաքին հավաստման (հավատարմագրում կամ աուդիտ) պարտադիր գործընթաց:



2.4. Ստեղծել և գործարկել ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակում ներառված որակավորումների ազգային տեղեկատվական ռեգիստր:

### Առաջընթացի/կատարողականի գնահատման ցուցիչներ

- ◆ *Գործում են ԲԿՈԱԸ-ի որակավորումների սահմանման (նկարագրման) միասնական ձևաչափեր և հաստատման ընթացակարգեր:*
- ◆ *Առկա են ԲԿՈԱԸ-ին և ՈՈՇ-ներին կրթական ծրագրերի համապատասխանությունը ստուգելու հստակ չափանիշներ:*
- ◆ *ՀՀ բարձրագույն կրթության ծրագրերի հավաքարմագրման գործող կարգը վերանայվել է կամ ներդրվել է կրթական ծրագրերի պարտադիր արտաքին աուդիտի նոր կարգ:*
- ◆ *Որակավորումների ազգային ռեգիստրը գործում է և առցանց հասանելի է լայն հանրությանը:*

Ռ-ազմավարական ծրագրի իրականացման ընթացքում հիմնական շահակիցների հետ համատեղ կմշակվեն մոնիթորինգի (մշտադիտարկման) մեխանիզմներ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև կատարողականի գնահատման լրացուցիչ ցուցիչներ:





### **ՆՊԱՏԱԿ 3. ԽԹԱՆԵԼ ՀՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱԶԳԱՑԻՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՃԱՆԱԶՈՒՄԸ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ, ԻՍԿ ԱՅՆՏԵՂ ՇՆՈՐՀՎԱԾՆԵՐԻՆԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ:**

Անհատները, սովորաբար, երկու նպատակով են դիմում իրենց որակավորումները ճանաչելու՝ կրթությունը շարունակելու կամ աշխատանքի անցնելու համար: Ընդ որում, ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում աշխատանքի անցնելիս գործում են որակավորումների ճանաչման խիստ տարբեր մոտեցումներ: Սա պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ կան մասնագիտական ոլորտներ, որտեղ մասնագիտական գործունեությունը կարգավորվում է օրենքով (օրինակ, բժշկություն, իրավագիտություն և այլն) և կան այնպիսիք, որոնք ընդհանրապես չեն կարգավորվում:

ՀՀ ԲԿՈԱԾ-ի որակավորումների ճանաչումն արտերկրում պետք է խթանվի մի քանի ուղղություններով: Նախ, ԲԿՈԱԾ-ը պետք է համադրելի լինի Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի (ԵԲԿՏ) որակավորումների շրջանակի (Դուբլինյան նկարագրիչների) հետ և անցնի ինքնահավաստագրում, այնուհետև այն պետք է համապատասխանեցվի Որակավորումների եվրոպական շրջանակին (Հարատև/ցկյանս ուսումնառության որակավորումների շրջանակին): Սա կնպաստի ՀՀ-ում շնորհված որակավորումների ճանաչմանը արտերկրում և կոլլուրացնի ՀՀ քաղաքացիների մուտքը միջազգային աշխատաշուկա կամ կրթական ոլորտ: Մյուս կողմից, արտասահմանում շնորհված որակավորումների քանակի զգալի աճը Հայաստանում պահանջում է դրանց ճանաչման հստակ չափանիշներ և ընթացակարգեր:



### **Իրականացվող խնդիրները մինչև 2020 թվականը**

3.1. Համապատասխանեցնել ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակը Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի և Որակավորումների եվրոպական շրջանակներին:



- 3.2. Կնքել բարձրագույն կրթության որակավորումների փոխհարաբերման վերաբերյալ երկկողմ համաձայնագրեր եվրոպական և այլ տարածաշրջանների երկրների հետ:
- 3.3. Տրամադրել ամբողջական և հավաստի տեղեկատվություն որակավորումների ճանաչման արտասահմանյան մարմիններին՝ ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակի և դրա որակավորումների վերաբերյալ:
- 3.4. Նպաստել ՀՀ բուհերի, սովորողների, գործատուների և այլ շահակիցների իրազեկվածության բարձրացմանը Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնի (ԱՓՇԱՏԿ) գործառույթների վերաբերյալ:

## Առաջընթացի/կատարողականի գնահատման ցուցիչներ

- ◆ *ԲԿՈԱԸ-ն անցել է ինքնահավաստագրում:*
- ◆ *Առկա են որակավորումների փոխադարձ ճանաչման վերաբերյալ երկկողմ համաձայնագրեր:*
- ◆ *ԲԿՈԱԸ-ի և դրա որակավորումների վերաբերյալ անգլալեզու տեղեկատվությունը հասանելի է համացանցում:*
- ◆ *ՀՀ որակավորումների ճանաչումը ԲԿՈԱԸ-ի միջոցով հնարավոր է արդյունավետ:*
- ◆ *Հարցումների արդյունքում հիմնական շահակիցներից ստացված կարծիքը ԱՓՇԱՏԿ-ի գործառույթների վերաբերյալ:*

Ռազմավարական ծրագրի իրականացման ընթացքում հիմնական շահակիցների հետ համատեղ կմշակվեն մոնիթորինգի (մշտադիտարկման) մեխանիզմներ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև կատարողականի գնահատման լրացուցիչ ցուցիչներ:



## ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Սահմանված խնդիրներից յուրաքանչյուրի իրագործման համար առաջարկվում են հետևյալ գործողությունները և միջոցառումները:



**ՆՊԱՏԱԿ 1. ԻՐԱԶԵԿԵԼ ՀԱՆՐՈՒԹՅԱՆԸ ՀՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ  
ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿԻ  
ՄԱՍԻՆ ԵՎ ԽԹԱՆԵԼ ԴՐԱ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԲՈԼՈՐ ՀԻՄՆԱԿԱՆ  
ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ:**

**ԽՆԴԻՐ 1.1.** Ստեղծել ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակի գործադրման և հետագա զարգացման համար պատասխանատու կառույց/մարմին:

- 1.1.1. Կազմակերպել քննարկումներ ԿԳՆ-ի, բուհերի և այլ հիմնական շահակիցների հետ՝ ԲԿՈԱՇ-ի պատասխանատու կառույցի/մարմնի կարգավիճակի, լիազորությունների ու պատասխանատվությունների սահմանման վերաբերյալ:
- 1.1.2. Մշակել և հաստատել կառույցի/մարմնի կանոնադրությունը, ընտրել կազմը:
- 1.1.3. Ստեղծել և հաստատել կառույցի/մարմնի գործունեության նորմատիվային և մեթոդաբանական հենքը:

**ԽՆԴԻՐ 1.2.** Բարձրացնել բոլոր շահակիցների և հանրության իրազեկվածությունը ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակի վերաբերյալ:

- 1.2.1. Ստեղծել ԲԿՈԱՇ-ի հիմնական տերմինները, հասկացությունները և սկզբունքները պարզաբանող համակարգված տերմինաբանական բառարան:



- 1.2.2. Մշակել համապատասխան ուղեցույցներ և լուսաբանող նյութեր՝ տարբեր շահակիցների համար (սովորողներ և նրանց ծնողներ, բուհեր և այլ ուսումնական հաստատություններ, գործատուներ և նրանց ներկայացուցիչներ և այլն)՝ որակավորումներն ավելի հասկանալի դարձնելու և սովորողների մասնագիտական կողմնորոշումը խթանելու համար:
- 1.2.3. Իրականացնել մշակված տերմինաբանական բառարանի, ուղեցույցների և լուսաբանող նյութերի տարածմանն ուղղված տարբեր միջոցառումներ (շնորհանդեսներ, քննարկումներ, սեմինարներ և աշխատաժողովներ և այլն) բոլոր հիմնական շահակիցների շրջանում:

**ԽՆԴԻՐ 1.3. Մշակել ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակի գործադրման համար անհրաժեշտ իրավական և մեթոդաբանական հենքն ու պրակտիկ գործիքամիջոցները:**

- 1.3.1. Սահմանել ԲԿՈԱԸ-ը և նրա հիմնական նպատակները «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքում:
- 1.3.2. Մշակել ԲԿՈԱԸ-ի իրականացման ձեռնարկ՝ բուհերի, գործատուների և ոլորտը կարգավորող պետական մարմինների ու այլ շահակիցների համար:
- 1.3.3. Մշակել համապատասխան գործիքամիջոցներ (չափանիշներ) և թափանցիկ ընթացակարգեր՝ գործող որակավորումները ԲԿՈԱԸ-ին համապատասխանեցնելու և նոր որակավորումները շրջանակում ներառելու համար:



**ԽՆԴԻՐ 1.4. Զարգացնել ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակի հիմնական շահակիցների ներուժը՝ շրջանակի արդյունավետ կիրառման և հետագա զարգացման նպատակով:**

- 1.4.1. Կազմակերպել բուհերի դասախոսական և վարչական կազմերի, ՀՀ ԿԳՆ-ի, ԲԿՈԱՇ-ի պատասխանատու կառույցի/մարմնի, ՈԱԱԿ-ի, ԱՓՇԱՏԿ-ի համապատասխան աշխատողների պարբերական ուսուցում և վերապատրաստում՝ կրթական վերջնարդյունքների վրա հիմնված որակավորման նկարագրիչներ ձևակերպելու և գնահատելու հմտությունների զարգացման նպատակով:
- 1.4.2. Տարածել ԲԿՈԱՇ-ի իրականացման ձեռնարկը հիմնական շահակիցների շրջանում:
- 1.4.3. Իրականացնել բուհերի դասախոսական և վարչական կազմերի վերապատրաստումներ՝ ԲԿՈԱՇ-ի և ՈՈՇ-ների հիման վրա կրթական ծրագրեր և դասընթացներ մշակելու հմտությունների զարգացման նպատակով:
- 1.4.4. Տե՛ս նաև 1.5.3 գործողությունը:

**ԽՆԴԻՐ 1.5. Ստեղծել ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակին համահունչ որակավորումների ոլորտային շրջանակներ՝ բարձրագույն կրթության տարբեր մասնագիտական ոլորտների համար:**

- 1.5.1. Մշակել ՀՀ բարձրագույն կրթության ՈՈՇ-ների մշակման մեթոդաբանությունը և ՈՈՇ-ի ձևակերպման ազգային մոդելը:



- 1.5.2. Կազմել ՈՈՇ-ները մշակող աշխատանքային խմբեր՝ ըստ ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների գործող ցանկի<sup>3</sup>:
- 1.5.3. Իրականացնել աշխատանքային խմբերի ուսուցում՝ կրթական վերջնարդյունքների վրա հիմնված մակարդակի/որակավորման նկարագրիչներ ձևակերպելու և գնահատելու հմտությունների զարգացման նպատակով:
- 1.5.4. Ստեղծել 5 փորձնական ՈՈՇ-ներ՝ իրավագիտություն, քաղաքաշինություն, կրթություն, գյուղատնտեսություն և ֆիզիկա մասնագիտական ոլորտների համար:
- 1.5.5. ՈՈՇ-ների ստեղծման հաջողված փորձը տարածել բոլոր մասնագիտական ոլորտներում:

**ԽՆԴԻՐ 1.6. Մշակել և գործադրել ինստիտուցիոնալ (բուհական) մակարդակում ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակի իրականացման համալիր միջոցառումների ծրագիր:**

- 1.6.1. Մշակել ազգային և ինստիտուցիոնալ քաղաքականություններ ու համապատասխան մեթոդաբանություն՝ ԲԿՈԱՇ-ի և ՈՈՇ-ների հիման վրա կրթական ծրագրերի ստեղծման համար:
- 1.6.2. Մշակել ՀՀ բարձրագույն կրթության ծրագրերի ներկայացման մասնագրի (սպեցիֆիկացիա) միասնական ձևաչափ և չափանիշներ:
- 1.6.3. Ստեղծել կրթական վերջնարդյունքների վրա հիմնված բակալավրի և մագիստրոսի ծրագրերի նմուշօրինակներ 5 մաս-

<sup>3</sup> ՀՀ կառավարության 23 հոկտեմբերի 2014թ. թիվ 1191-Ն որոշումը բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների գործող ցանկը հաստատելու մասին:



նագիտական ոլորտներում՝ ԲԿՈԱՇ-ի և ՈՈՇ-ների նկարագրիչներին համահունչ:

1.6.4. Կազմել և իրականացնել ՀՀ բարձրագույն կրթության բոլոր ծրագրերի վերանշակման աշխատանքային պլան:

**ԽՆԴԻՐ 1.7.** Մշակել օրենսդրական փոփոխությունների նախագիծ՝ պետական և հանրային կառույցների աշխատողների ծառայողական անձնագրերում ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակին համապատասխան հղումներ ներառելու նպատակով:

1.7.1. Նախապատրաստել և հաստատման ներկայացնել համապատասխան օրենսդրական փոփոխությունների փաթեթ:

1.7.2. Ներառել համապատասխան հղումներ ԲԿՈԱՇ-ին՝ պետական և հանրային կառույցների աշխատողների ծառայողական անձնագրերում:

**ԽՆԴԻՐ 1.8.** Մշակել և իրականացնել նախընթաց ուսումնառության ճանաչումը խթանող գործողությունների ազգային ծրագիր՝ հիմնված ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային և ոլորտային շրջանակների օգտագործման վրա:

1.8.1. Ստեղծել համապատասխան հանձնախումբ, սահմանել վերջինիս լիազորությունների և պատասխանատվությունների շրջանակը:

1.8.2. Մշակել և հաստատել նախընթաց ուսումնառության ճանաչման ազգային քաղաքականություն և գործողությունների ծրագիր:

1.8.3. Մեկնարկել և իրականացնել նախընթաց ուսումնառության ճանաչման ազգային ծրագիրը:



**ՆՊԱՏԱԿ 2. ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ՀՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՈՐԱԿԻ ՀԱՎԱՍՏՈՒՄ՝ ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ:**

**ԽՆԴԻՐ 2.1.** Ստեղծել ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակում ներառվող որակավորումների նկարագրման (սահմանման) չափորոշիչներ, ձևաչափեր և համապատասխան ընթացակարգ:

- 2.1.1. Մշակել ԲԿՈԱԾ-ում ներառվող որակավորումների նկարագրման չափորոշիչների լրակազմը և ներկայացման ձևաչափը:
- 2.1.2. Մշակել ԲԿՈԱԾ-ում որակավորումների ներառման ընթացակարգ:

**ԽՆԴԻՐ 2.2.** Մշակել և գործադրել անհրաժեշտ գործիքակազմ ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային և ոլորտային շրջանակների նկարագրիչներին բարձրագույն կրթության ծրագրերի համապատասխանությունը ստուգելու համար:

- 2.2.1. Մշակել չափանիշներ կրթական ծրագրերի համապատասխանությունը ԲԿՈԱԾ-ին և ՈՈՇ-ներին ստուգելու համար:
- 2.2.2. Մշակել համապատասխանության ստուգման ընթացակարգ:

**ԽՆԴԻՐ 2.3.** Ներմուծել և իրականացնել ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակում ներառված որակավորումների կրթական ծրագրերի որակի արտաքին հավաստման (հավատարմագրում կամ աուդիտ) պարտադիր գործընթաց:

- 2.3.1. Կազմել կրթական ծրագրերի հավատարմագրման/աուդիտի ժամանակացույց և միջոցառումների ծրագիր՝ ըստ մասնագիտական ոլորտների (ծրագրային կլաստերների):





- 2.3.2. Կազմավորել փորձագիտական խմբեր ըստ մասնագիտական ոլորտների:
- 2.3.3. Կազմակերպել փորձագիտական խմբերի ուսուցում:
- 2.3.4. Իրականացնել կրթական ծրագրերի հավատարմագրում/ատոլիտ՝ ըստ սահմանված ժամանակացույցի:

**ԽՆԴԻՐ 2.4. Ստեղծել և գործարկել ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակում ներառված որակավորումների ազգային տեղեկատվական ռեգիստր:**

- 2.4.1. Մշակել ռեգիստրի կառուցվածքը և ձևաչափը, որակավորումների գրանցման ու տվյալների ներկայացման կարգը:
- 2.4.2. Հաստատել որակավորումների ռեգիստրը ՀՀ Կրթության և գիտության նախարարությունում:
- 2.4.3. Գրանցել ՀՀ բարձրագույն կրթության որակավորումները և ծրագրերը ազգային ռեգիստրում:



**ՆՊԱՏԱԿ 3. ԽԹԱՆԵԼ ՀՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ  
ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ  
ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՃԱՆԱՉՈՒՄԸ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ, ԻՍԿ ԱՅՆՏԵՂ  
ՇՆՈՐՀՎԱԾՆԵՐԻՆԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ:**

**ԽՆԴԻՐ 3.1.** Համապատասխանեցնել ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակը Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի և Որակավորումների եվրոպական շրջանակներին:

- 3.1.1. Ստեղծել ինքնահավաստագրման աշխատանքային խումբ:
- 3.1.2. Նախապատրաստել ԲԿՈԱՇ-ը ինքնահավաստագրման գործընթացին, կազմել ինքնահավաստագրման զեկույց:
- 3.1.3. Ներգրավել եվրոպական փորձագետներին, իրականացնել ինքնահավաստագրման գործընթաց:

**ԽՆԴԻՐ 3.2.** Կնքել բարձրագույն կրթության որակավորումների փոխհարաբերման վերաբերյալ երկկողմ համաձայնագրեր եվրոպական և այլ տարածաշրջանների երկրների հետ:

- 3.2.1. Կազմել կնքվող համաձայնագրերի տիպային օրինակ:
- 3.2.2. Կազմել առաջնահերթ/գերակա երկրների ցանկը և նրանց հետ վարել նախնական բանակցություններ:
- 3.2.3. Կնքել համապատասխան համաձայնագրեր՝ ըստ պատրաստության աստիճանի:



**ԽՆԴԻՐ 3.3. Տրամադրել ամբողջական և հավաստի տեղեկատվություն որակավորումների ճանաչման արտասահմանյան մարմինների՝ ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակի և դրա որակավորումների վերաբերյալ:**

- 3.3.1. Ստեղծել ԲԿՈԱՇ-ի որակավորումների ռեգիստրի անգլերեն տարբերակը, բոլոր գրանցված որակավորումների նկարագրությունները թարգմանել անգլերեն:
- 3.3.2. Տեղադրել այն ԲԿՈԱՇ-ի պատասխանատու կառույցի և ԱՓՇԱՏԿ-ի կայքերում, տրամադրել արտասահմանյան որակավորումները ճանաչող օտարերկրյա կառույցներին:

**ԽՆԴԻՐ 3.4. Նպաստել ՀՀ բուհերի, սովորողների, գործատուների և այլ շահակիցների իրազեկվածության բարձրացմանը Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնի (ԱՓՇԱՏԿ) գործառույթների վերաբերյալ:**

- 3.4.1. Կազմել և հրատարակել որակավորումների ճանաչման գործընթացը լուսաբանող ուղեցույց և տարբեր տեղեկատվական կյութեր: Տարածել դրանք հիմնական շահակիցների շրջանում:
- 3.4.2. Պարբերաբար կազմակերպել որակավորումների ճանաչման գործընթացի վերաբերյալ տեղեկատվական սեմինարներ բուհերի, գործատուների և այլ շահակիցների համար:



## ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

ՀՀ ԲԿՈԱՇ-ի ռազմավարական ծրագրի իրականացման և մշտադիտարկման նպատակով մշակվել են համապատասխան ժամանակացույց (Հավելված 1) և մանրամասն աշխատանքային պլան (Հավելված 2), որտեղ ներկայացված են մինչև 2020թ. ընկած ժամանակահատվածի համար նախանշված գործողությունները/միջոցառումները, դրանց իրականացման ժամկետներն ու պատասխանատուները, ինչպես նաև ֆինանսավորման աղբյուրները և ակնկալվող արդյունքները: Ռազմավարական ծրագրի կատարման ընդհանուր վերահսկողությունն իրականացնում է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը:

Սույն ռազմավարական ծրագրի կատարման հաշվետվողականության հիմնական մեխանիզմները և ժամկետներն են.

- ◆ Աշխատանքային պլանի կատարողականի ամենամյա գնահատում՝ ձեռքբերված ակնկալվող արդյունքների չափման միջոցով:
- ◆ Ռազմավարական ծրագրի ավարտին կատարողականի ընդհանուր գնահատում՝ առաջընթացի/կատարողականի ցուցիչների և ՀՀ բարձրագույն կրթության համակարգի վրա ծրագրի ազդեցության որոշման միջոցով:

Ռազմավարական ծրագրի արդյունավետ իրականացման նպատակով ՀՀ ԲԿՈԱՇ-ի համար պատասխանատու մարմինը/կառույցը սերտորեն համագործակցելու է բարձրագույն կրթության համակարգի բոլոր հիմնական շահակիցների՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության, բուհերի (և այլ կրթական հաստատությունների), ՈԱԱԿ-ի, ԱՓՇԱՏԿ-ի, սովորողների, սոցիալական գործընկերների, ինչպես նաև առնչվող պետական և հասարակական կառույցների հետ:





## ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՑԻՆ ՊԼԱՆ



**ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 1.** Իրագեցել հանրությանը ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակի մասին և խթանել դրա օգտագործումը բոլոր հիմնական շահակիցների կողմից



**ԽՆԴԻՐ 1.1.** Ստեղծել ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակի գործադրման և հետագա զարգացման համար պատասխանատու կառույց/մարմին (01-06/2016)

Գործողություն/միջոցառում	Ժամկետ	Պատասխանատու	Ֆինանսավորման աղբյուր	Այնկալվող արդյունք
1.1.1. Կազմակերպել քննարկումներ ԿԳՆ-ի, բուհերի և այլ հիմնական շահակիցների հետ ԲԿՈԱԸ-ի պատասխանատու կառույցի/մարմնի կարգավիճակի, լիազորությունների ու պատասխանատվությունների սահմանման վերաբերյալ	01/2016	ՀՀ ԿԳՆ	-	Համապատասխան երաշխավորությունների լրակազմ
1.1.2. Մշակել և հաստատել կառույցի/մարմնի կանոնադրությունը, ընտրել կազմը	02-03/2016	Տեմկուտ ARMENQA ծրագիր, ՀՀ ԿԳՆ	Համաձայն ծրագրի բյուջեի	Հաստատված կանոնադրություն և կազմ
1.1.3. Ստեղծել և հաստատել կառույցի/մարմնի գործունեության նորմատիվային և մեթոդաբանական հենքը	04-06/2016	Տեմկուտ ARMENQA ծրագիր, ՀՀ ԿԳՆ	Համաձայն ծրագրի բյուջեի	Պաշտոնապես հաստատված կառույց





**ԽՆԴԻՐ 1.2.** Բարձրացնել բոլոր շահակիցների և հանրության իրազեկվածությունը ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակի վերաբերյալ (01/2016–12/2017)

Գործողություն/միջոցառում	Ժամկետ	Պատասխանատու	Ֆինանսավորման աղբյուր	Ակնկալվող արդյունք
1.2.1. Ստեղծել ԲԿՈԱԸ-ի հիմնական տերմինները, հասկացությունները և սկզբունքները պարզաբանող համակարգված տերմինաբանական բառարան	01/2016	Տեմպուս ARMENQA ծրագիր	Համաձայն ծրագրի բյուջեի	Հրատարակված տերմինաբանական բառարան
1.2.2. Մշակել համապատասխան ուղեցույցներ և լուսաբանող նյութեր՝ տարբեր շահակիցների համար (սպորտիստներ և նրանց ծնողներ, բուհեր և այլ ուսումնական հաստատություններ, գործատուներ և նրանց ներկայացուցիչներ և այլն)՝ դրակավորումներն ավելի հասկանալի դարձնելու և սովորողների մասնագիտական կողմնորոշումը խթանելու համար	02/2016	Տեմպուս ARMENQA ծրագիր	Համաձայն ծրագրի բյուջեի	Հրատարակված 3 ուղեցույց և լուսաբանող այլ նյութեր
1.2.3. Իրականացնել մշակված տերմինաբանական բառարանի, ուղեցույցների և լուսաբանող նյութերի տարածմանն ուղղված տարբեր միջոցառումներ (շնորհանդեսներ, քննարկումներ, սեմինարներ և աշխատաժողովներ և այլն ) բոլոր հիմնական շահակիցների շրջանում	03/2016-12/2017	Տեմպուս ARMENQA ծրագիր, ՀՀ ԿԳՆ, բուհեր, ԱՓՇԱՏԿ, ԲԿՈԱԸ-ի պատասխանատու մարմին, ՀԳՀՄ	Համաձայն ծրագրի բյուջեի, այլ աղբյուրներ	ԲԿՈԱԸ-ի իրազեկման 4 միջոցառում





**ԽՆԴԻՐ 1.3.** Մշակել ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակի գործադրման համար անհրաժեշտ իրավական և մեթոդաբանական հենքն ու պրակտիկ գործիքամիջոցները (01-12/2016)

Գործողություն/միջոցառում	Ժամկետ	Պատասխանատուն	Ֆինանսավորման աղբյուր	Ակնկալվող արդյունք
1.3.1. Սահմանել ԲԿՈԱԸ-ը և նրա հիմնական նպատակները «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքում	03-12/2016	ՀՀ ԿԳՆ	-	ԲՀՄԿ մասին լրացված ՀՀ օրենք
1.3.2. Մշակել ԲԿՈԱԸ-ի իրականացման ձեռնարկ՝ բուհերի, գործատուների և ոլորտը կարգավորող պետական մարմինների ու այլ շահակիցների համար	01-02/2016	Տեմպուս ARMENQA ծրագիր	Համաձայն ծրագրի բյուջեի	ԿԳՆ-ի կողմից երաշխավորված ԲԿՈԱԸ-ի իրականացման հրատարակված ձեռնարկ
1.3.3. Մշակել համապատասխան գործիքամիջոցներ (չափանիշներ), և թափանցիկ ընթացակարգեր՝ գործող որակավորումները ԲԿՈԱԸ-ին համապատասխանեցնելու և նոր որակավորումները շրջանակում ներառելու համար	01-02/2016	Տեմպուս ARMENQA ծրագիր, ՀՀ ԿԳՆ	Համաձայն ծրագրի բյուջեի	ԲԿՈԱԸ-ում որակավորումների գրանցման ԿԳՆ-ի կողմից հաստատված չափանիշներ և ընթացակարգեր





**ԽՆԴԻՐ 1.4.** Զարգացնել ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակի հիմնական շահակիցների ներուժը՝ շրջանակի արդյունավետ կիրառման և հետագա զարգացման նպատակով (01/2016–12/2017)

Գործողություն/միջոցառում	Ժամկետ	Պատասխանատու	Ֆինանսավորման աղբյուր	Ակնկալվող արդյունք
1.4.1. Կազմակերպել բուհերի դասախոսական և վարչական կազմերի, ՀՀ ԿԳՆ-ի, ԲԿՈԱԸ-ի պատասխանատու կառույցի/մարմնի, ՈԱԱԿ-ի, ԱՓՇԱՍԿ-ի համապատասխան աշխատողների պարբերական ուսուցում և վերապատրաստում՝ կրթական վերջնարդյունքների վրա հիմնված որակավորման նկարագրիչներ ձևակերպելու և գնահատելու հնտությունների զարգացման նպատակով	01-12/2016	Տեմպուս ARMENQA ծրագիր, TWINNING AM/13/ENP/OT/13 ծրագիր <sup>4</sup>	Համաձայն 2 ծրագրերի բյուջեների	Շուրջ 200 վերապատրաստվածներ՝ ԲԿՈԱԸ-ի հիմնական շահակիցներից
1.4.2. Տարածել ԲԿՈԱԸ-ի իրականացման ձեռնարկը հիմնական շահակիցների շրջանում	03-06/2016	Տեմպուս ARMENQA ծրագիր	-	Ձեռնարկի 1000 տարածված օրինակ

<sup>4</sup> Եվրոպական Միության հարևանության գործընկերության «Թ-վիժն» գործիք: Ծրագիր, որն ուղղված է Հայաստանի բարձրագույն կրթության ոլորտի հզորացմանը՝ եվրոպական բարձրագույն կրթական տարածքին ինտեգրվելու նպատակով:



Գործողություն/միջոցառում	Ժամկետ	Պատասխանատու	Ֆինանսավորման աղբյուր	Ակնկալվող արդյունք
1.4.3. Իրականացնել բուհերի դասախոսական և վարչական կազմերի վերապատրաստումները՝ ԲԿՈԱԾ-ի և ՈՈՇ-ների հիման վրա կրթական ծրագրեր և դասընթացներ մշակելու հնտությունների գարգացման նպատակով	06/2016-12/2017	Տեմպուա ARMENQA ծրագիր, TWINNING AM/13/ENP/OT/13 ծրագիր, ՀՀ բուհեր	Համաձայն 2 ծրագրերի բյուջեների, բուհերի միջոցներ	ՀՀ բուհերի շուրջ 200 վերապատրաստված աշխատողներ
1.4.4. Տե՛ն նաև 1.5.3 գործողությունը				



**ԽՆԴԻՐ 1.5.** Ստեղծել ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակին համահունչ որակավորումների ոլորտային շրջանակներ (ՈՈՇ)՝ բարձրագույն կրթության տարբեր մասնագիտական ոլորտների համար (01/2016-12/2020)

Գործողություն/միջոցառում	Ժամկետ	Պատասխանատու	Ֆինանսավորման աղբյուր	Ակնկալվող արդյունք
1.5.1. Մշակել ՀՀ բարձրագույն կրթության ՈՈՇ-ների մշակման մեթոդաբանությունը և ՈՈՇ-ի ձևակերպման ազգային ստրեղը	01-02/2016	Տեմպուա ARMENQA ծրագիր	Համաձայն ծրագրի բյուջեի	Ոլորտային շրջանակների մշակման հրատարակված ղեկավար ձեռնարկ



Գործողություն/միջոցառում	Ժամկետ	Պատասխանատու	Ֆինանսավորման աղբյուր	Ակնկալվող արդյունք
1.5.2. Կազմել ՈՈՇ-ները մշակող աշխատանքային խմբեր՝ ըստ ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների գործող ցանկի	01/2016 01-06/2017	Տեմպուս ARMENQA ծրագիր, ՀՀ ԿԳՆ	-	Գործող 5 աշխատանքային խմբեր, Գործող աշխատանքային խմբեր ԲԿ բոլոր մասնագիտական ոլորտներում
1.5.3. Իրականացնել աշխատանքային խմբերի ուսուցում՝ կրթական վերջնադրույթների վրա հիմնված մակարդակի/որակավորման նկարագրիչներ ձևակերպելու և գնահատելու հմտությունների զարգացման նպատակով	02-06/2016 07/2017- 07/2018	Տեմպուս ARMENQA ծրագիր, ՀՀ ԿԳՆ	Համաձայն ծրագրի բյուջեի, ԿԳՆ հատկացումներ	25 վերապատրաստված փորձագետ, Ծուրջ 140 վերապատրաստված փորձագետ
1.5.4. Ստեղծել 5 փորձնական ՈՈՇ-ներ՝ իրավագիտություն, կրթություն, գյուղատնտեսություն, բաղաբաշխություն և ֆիզիկա մասնագիտական ոլորտների համար	07-12/2016	Տեմպուս ARMENQA ծրագիր	Համաձայն ծրագրի բյուջեի	5 ոլորտային շրջանակներ
1.5.5. ՈՈՇ-ների ստեղծման հաջողված փորձը տարածել բոլոր մասնագիտական ոլորտներում	09/2018- 12/2020	ՀՀ ԿԳՆ	ԿԳՆ հատկացումներ	Ոլորտային շրջանակներ ԲԿ բոլոր մասնագիտական ոլորտներում



**ԽՆԴԻՐ 1.6.** Մշակել և գործադրել ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակի ինստիտուցիոնալ (բուհական) մակարդակում իրականացնան համալիր միջոցառումների ծրագիր (01/2016-12/2018)

Գործողություն/միջոցառում	Ժամկետ	Պատասխանատու	Ֆինանսավորման աղբյուր	Ակնկալվող արդյունք
1.6.1. Մշակել ազգային և ինստիտուցիոնալ բաղաբաղադրյալություններ ու համապատասխան մեթոդաբանություն՝ ԲԿՈՍԸ-ի և ՈՈՇ-ների հիման վրա կրթական ծրագրերի ստեղծման համար	03-04/2016	Տեմպուս ARMENQA ծրագիր	Համաձայն ծրագրի բյուջեի	Կրթություն հեն կրթական ծրագրերի մշակման հրատարակված ղեկավար ձեռնարկ
1.6.2. Մշակել ՀՀ բարձրագույն կրթության ծրագրերի ներկայացման մասնագրի (սպեցիֆիկացիա) միասնական ձևաչափ և չափանիշներ	05-06/2016	Տեմպուս ARMENQA ծրագիր, ՀՀ ԿԳՆ	Համաձայն ծրագրի բյուջեի	ԲԿ կրթական ծրագրերի ներկայացման միասնական ձևաչափ (մասնագիր) և համապատասխան պահանջներ՝ հաստատված ՀՀ ԿԳՆ-ի կողմից
